

ՆՎԱՐԴ ՊՈՂՈՍՅԱՆ

Հաշվապահական հաշվառում և հարկում,
բակալավորիչ, 2-րդ կուրս

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ՝ ԿԱՏԱՎԱԾ ԳՆԱՃԻՑ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ

Հիմնաբառեր. ներդրումային նախագիծ, գնաճ, հարկում,
զույր ներկա արժեք (ՀՆԱ), գնահատում,
շահույթ

Հոդվածում ներկայացված է տնտեսության բնականոն զարգացումն ապահովող ներդրումային նախագծերի գնահատումը՝ կախված գնաճից և հարկումից: Փորձ է արվել ամերիկյան կազմակերպության ներդրումային նախագծի հիման վրա գնահատելու հարկային խնայողությունների ու գնաճի դերը ներդրումների արդյունավետության մեջ, դիտարկվել է նախագծի իրական եկամտաբերությունն առկա գնաճի պայմաններում, հարկային խնայողությունների մասնաբաժինը մաշվածության գծային և նվազող մնացորդի մեթոդներով հաշվարկման դեպքում: Հաշվարկվել է նախագծի զույր ներկա արժեքը, երբ մաշվածությունը հաշվարկվում է գծային, ինչպես նաև նվազող մնացորդի մեթոդով: Հետազոտության արդյունքներն ընդգծել են, որ առավել արդյունավետ է կիրառել մաշվածության հաշվարկման նվազող մնացորդի մեթոդը, քանի որ այդ դեպքում ավելանում են հարկային խնայողությունները և բարձրանում է ծրագրի զույր ներկա արժեքը:

Ներածություն: Յուրաքանչյուր պետության առաջնահերթություններից է կայուն տնտեսական աճի ապահովումը, որի վրա էական ազդեցություն ունեն ներդրումները: Շուկայական տնտեսության պայմաններում տնտեսության բնականոն զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է ակտիվ ներդրումային գործունեության իրականացում տնտեսության տարբեր ճյուղերում, քանի որ տնտեսական աճի ապահովման համար ներդրումների ցանկալի մակարդակը ՀՆԱ-ում 20-25% է¹: Ուստի, արդյունավետ ներդրումային նախագծերի իրականացումը պետության զարգացման գործում անչափ կարևոր է:

Գրականության ակնարկ: Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են ներդրումային նախագծերի գնահատման մի շարք մոտեցումներ: Ռոլան Մնացականյանն ուսումնասիրել է կապիտալ ապրանքների ներմուծման համար ԱԱՀ-ի վճարման ժամկետների երկարաձգման հարկային արտոնության ազդեցությունը ներդրումների խթանման և կապիտալի կուտակման վրա: Արդյունքում, ակնհայտ է դարձել, որ հարկային արտոնությունը նշանակալիորեն նվազեցնում է ներդրողների հարկային բեռը և մեկ միավոր ներդրման հաշվով կապիտալի ծախսը, ինչը խթանում է նոր ներդրումները և դրականորեն է ազդում կապիտալի նկատմամբ պահանջարկի և կապիտալի կուտակման վրա²:

Մոնիեր Հինդին և Պերգամ Էլ Միսիրին ուսումնասիրել են գնաճի ազդեցությունը ներդրումային նախագծերի գնահատման ժամանակ: Հոդվածում ներկայացված է, որ ներդրումային նախագծերի գնահատումը և արդյունավետությունը չեզոք չեն գնաճի նկատմամբ, քանի որ գնաճի հետևանքով բարձ-

¹ Տե՛ս Գ. Մանուկյան, Արտադրական կազմակերպությունների ֆինանսներ, Եր., հեղինակային հրատարակություն, 2018, էջ 235:

² Տե՛ս Ռ. Մնացականյան, Ներդրումային ծրագրերի շրջանակներում կապիտալ ապրանքների ներմուծման նկատմամբ կիրառվող հարկային խթանների ազդեցության գնահատում, ՀՀ կենտրոնական բանկ, Դիլիջան ուսումնահետազոտական կենտրոն, 2016:

րանում են արտադրանքի գները, ավելանում են կապիտալ և գործառնական ծախսերը: Ինչպես նաև կարևորվել է մաշվածության հաշվարկման եղանակը՝ զուտ ներկա արժեքի գնահատման տեսանկյունից¹:

Այսպիսով, մասնագիտական գրականության ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ ներդրումային նախագծերի արդյունավետության վրա մեծ ազդեցություն ունեն հարկային արտոնությունները, որոնք նպաստում են նախագծի զուտ ներկա արժեքի ավելացմանը, և գնաճը, որը հանգեցնում է կապիտալ և գործառնական ծախսերի մեծացմանը:

Մեթոդաբանություն: Տվյալները վերցված են ամերիկյան կազմակերպության աղբյուրներից, որոնք մշակվել են հեղինակի կողմից և օգտագործվել ցուցանիշների հաշվարկման ժամանակ: Հետազոտությունն իրականացվել է վերլուծության, համադրման, համեմատման և ընդհանրացման մեթոդների կիրառմամբ:

Հետազոտության արդյունքներ և քննարկում: Ներդրումները շահույթ կամ սոցիալական արդյունք ստանալու նպատակով ձեռնարկատիրության ոլորտում կատարվող երկարաժամկետ ծախսեր են, որոնք կարող են իրագործվել ֆինանսական (փող, արժեթղթեր), գույքային (շինություններ, սարքավորումներ, մեքենաներ) և ինտելեկտուալ (արտոնագիր, լիցենզիա) եղանակներով:

Ներդրումային նախագիծը կարող է սահմանվել որպես փոխկապակցված խնդիրների և գործողությունների շարք՝ ընկերության կողմից ձևակերպված տնտեսական կամ ֆինանսական նպատակներին հասնելու համար²:

Ներդրումային նախագծերի իրականացման ամբողջ գործընթացում շատ կարևոր է ներդրումների արդյունավետության գնահատումը, քանի որ ներդրողը ժամանակավորապես սառեցնում է իր նյութական և ֆինանսական ռեսուրսները, հետևաբար պետք է դրա տնտեսական արդյունավետությունը գնահատի միկրո- և մակրոմակարդակներում: Վերջինիցս մեծապես կախված է ներդրումային որոշումներ ընդունելու հարցը: Այդպիսի գնահատման ճշտությունից և արժանահավատությունից են կախված ներդրված միջոցների հետ ստացման ժամկետները և ձեռնարկության զարգացման հեռանկարները: Բոլոր կազմակերպությունների համար կարևոր նշանակություն ունի ներդրումային գործունեության կառավարման արդյունավետությունը: Ներդրումային նախագծերն ընկերություններին թույլ են տալիս ստեղծել մրցակցային առավելություններ, մշակել ժամանակակից արտադրանքներ, իրականացնել վերազինում և կատարելագործել արտադրական գործընթացները:

Նախագծերը նախքան իրականացվելն անցնում են մի շարք փուլեր, որոնցից առանձնակի կարևոր է վերլուծությունների փուլը: Դրա շնորհիվ վեր են հանվում նախագծի հիմնական թերությունները ու ռիսկերը: Այդ վերլուծությունները ներառում են տեխնիկական, ինստիտուցիոնալ, սոցիալական, էկոլոգիական, ֆինանսական և մի շարք այլ վերլուծություններ, որոնցից առանձնակի կարևոր է ֆինանսականը, որն ապահովում է նախագծի նպատակահարմարությունն ու արդյունավետությունը: Այն թույլ է տալիս, որ ներդրողն իր միջոցների շուկայական արժեքը գնահատի նախագծով և առանց դրա: Համեմատությունների շնորհիվ չափելով ներդրման արդյունավետությունը՝ ներդրողն ընդունում է համապատասխան որոշում:

¹ St'ou Monier Hindy and Periham El Missiry, Project under inflation conditions, Tanta university, December 2004:

² https://ceopedia.org/index.php/Investment_project

Ներդրումային նախագծերի արդյունավետության վրա առանձնակի ազդեցություն ունեն՝

1. գնաճի ցուցանիշները նախագծի իրագործման ընթացքում,
2. պետության կողմից իրականացվող հարկային քաղաքականությունը:

Կապիտալ բյուջետավորումը ներառում է ներդրումների վրա տվյալ պահին ծախսվող դրամական միջոցների համեմատությունը ժամանակի ընթացքում տարածված դրամական միջոցների հոսքերի հետ: Դրանք ուղղակիորեն չեն կարող համեմատվել տվյալ պահին ծախսված դրամական միջոցների հետ: Այդ տեսանկյունից նախագծի իրագործման ընթացքում մեծ ազդեցություն ունեն գնաճի ցուցանիշները: Գնաճն (տնտեսության միջին գների մակարդակի կայուն և շարունակական աճը) ունի հետևյալ արդյունքները.

1. ոչ ընթացիկ ակտիվների և պաշարների արժեքը գումարայինով ավելանում է, այդ նույն ծավալով ավելանում է կապիտալը:
2. Ծախսերը և ապրանքների գներն աճում են: Բարձր գների էֆեկտը պահանջարկի վրա հեշտ չէ կանխատեսել:
3. Գնաճն ազդում է ֆինանսավորման պահանջի վրա. կարող է ազդել ունեցվածքի, կապիտալի արժեքի վրա¹:

Այսպիսով, նախագծի արդյունավետությունը գնահատելիս կարևոր է հաշվի առնել գնաճի գործոնը, քանի որ այն ազդում է դրամական միջոցների ակնկալվող հոսքերի և պահանջվող եկամտաբերության մակարդակի վրա և նվազեցնում է դրամական ներհոսքի ներկա արժեքը տվյալ նախագծի համար:

Հարկերը ներդրումային նախագծերի ծախսերի կազմում տեսակարար կշիռ ունեն, ուստի արդյունավետությունը գնահատելիս դրանք ևս պետք է դիտարկվեն: Հարկային վճարի համատեքստում պետք դիտարկել շահութահարկը, զուտ դրամական հոսքերը ճշգրտելով՝ այն կարող է դիտվել որպես հարկվող շահույթ: Մաշվածքի ծախսը նվազեցնում է հարկվող շահույթը, որը բերում է հարկային վճարումների նվազեցման, սա էլ իր հերթին՝ կանխիկ հոսքերի վճարման տնտեսման:

Նախագծերի արդյունավետությունը գնահատելու համար օգտագործվում են հետևյալ հիմնական ցուցանիշները:

Իրական և անվանական տոկոսադրույքների միջև կապն արտացոլող Ֆիշերի բանաձևն է՝

$$(1+i)=(1+r)(1+h)^2,$$

որտեղ՝ h -ը գնաճի դրույքն է, r -ը՝ իրական տոկոսադրույքը, i -ն՝ անվանական տոկոսադրույքը:

Իրական և անվանական տոկոսադրույքների միջև կապն արտացոլվում է Ֆիշերի բանաձևով:

Իրական դրամական հոսքերը պետք է դիսկոնտավորվեն իրական դիսկոնտային դրույքով, որն անտեսում է գնաճի եկամուտը: Անվանական դրամական հոսքը (իրական սպասումն է դրամական հոսքի ապագա գնով՝ ընդգրկելով գնաճի ավելացումները) պետք է դիսկոնտավորվի անվանական դիսկոնտային դրույքով, այն վերաբերում է ընթացիկ շուկայական եկամտաբերության դրույքին:

¹ Տե՛ս Գ. Մանուկյան, Արտադրական կազմակերպությունների ֆինանսներ, Եր., հեղինակային հրատարակություն, 2018, էջ 265:

² Տե՛ս նույն տեղը, էջ 264:

Երբ անվանական տոկոսադրույքը գերազանցում է գնաճի մակարդակը, առկա է դրական իրական տոկոսադրույք. հակառակ դեպքում կլինի բացասական իրական տոկոսադրույք:

Չուր ներկա արժեք՝ NPV

Չուտ ներկա արժեքը ժամանակի նույն պահին դիսկոնտավորված եկամուտների և ծախսերի (կապիտալ ներդրումների) տարբերությունն է: Այն արժեքի ստեղծման չափանիշ է. երբ ծրագրի NPV-ն դրական է, նախագիծը ստեղծում է արժեք, իսկ երբ բացասական է, նախագիծը ոչնչացնում է արժեքը:

$$NPV = \sum_{t=1}^n \frac{P_t}{(1+d)^t} - \sum_{t=0}^n \frac{I_t}{(1+d)^t} \quad NPV = \sum_{t=1}^n \frac{P_t}{(1+d)^t} - \sum_{t=0}^n \frac{I_t}{(1+d)^t},$$

որտեղ՝

P_t -ն ներդրումային հոսքերն են t ժամանակահատվածում,

d -ն՝ դիսկոնտի նորման,

n -ը՝ նախագծի տևողության ժամանակահատվածը,

I_t -ն՝ ներդրումային ծախսերը t -րդ ժամանակահատվածում:

Չուտ ներկա արժեքը՝ NPV-ն, աշխատանքային ծրագրերի արդյունավետ կառավարման գործիք է: Դրա հիմնական դերը ներդրման ֆինանսական կենսունակություն հաստատելն է երկարաժամկետ կտրվածքով՝ դիտարկելով զուտ զեղչված դրամական միջոցների մուտքերը և արտահոսքերը, որոնք նախագիծը կառաջացնի իր ողջ պարբերաշրջանի ընթացքում և վերածելով զուտ ներկա արժեքի՝ համեմատության համար¹:

Դրական NPV՝ շահույթ. ցույց է տալիս, որ ներդրումից ստացված եկամուտը գերազանցում է նախագծի ծախսերը: Բացասական NPV՝ վնաս, ցույց է տալիս, որ ներդրման ընթացքում կատարված բոլոր ծախսերն ավելի շատ են, քան եկամուտները:

Հեղինակն օրինակի միջոցով փորձել է ցույց տալ ներդրումային նախագծերի արդյունավետության գնահատումը, ու թե ինչպես են գնաճը և հարկումը ազդում դրա իրագործելիության վրա:

Ամերիկյան ընկերությունը նախատեսում է մեծացնել իր արտադրանքի արտահանման ծավալները, ինչն իրագործելու համար ընկերությանն անհրաժեշտ է ձեռք բերել 7 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ մի սարքավորում, որի օգտակար ծառայության ժամկետը հինգ տարի է: Սարքավորման ձեռքբերումից հետո ընկերությունն առաջին տարում կարտահանի լրացուցիչ 400,000 միավոր արտադրանք, որից հետո լրացուցիչ արտահանման ծավալները կաճեն տարեկան 21%-ով: Նման կանխատեսում կատարել է խորհրդատվական մի ընկերություն, որի ծառայությունների համար վճարվել է 50,000 ԱՄՆ դոլար: Ընկերության ղեկավարության կողմից կանխատեսումներն օգտագործվել են որոշում ընդունելիս, թե արդյոք արժե իրագործել տվյալ ծրագիրը: Արտադրանքի միավորի վաճառքի գինը կազմում է 14 ԱՄՆ դոլար, իսկ փոփոխուն ծախսերը՝ 10 ԱՄՆ դոլար: Հաստատուն ծախսերն առաջին տարում կազմելու են 70,000 ԱՄՆ դոլար և աճելու են տարեկան 15%-ով: Հաստատուն ծախսերի մեկ երրորդն է միայն առնչվում նշված ներդրումային ծրագրին: Շահութահարկի դրույքաչափը 20% է և վճարվում է 1 տարի շեղումով: Միաժամանակ

¹ St'u Using the Net Present Value Rule to Make Value-Creating Investment , Xu Hui, School of Business management Tong Hua Normal University, Tong Hua, China, © 2015. The authors – Published by Atlantis Press.

հայտնի է, որ սարքավորման մաշվածության ծախսերը նվազեցվում են շահութահարկի հաշվարկման նպատակով: Սարքավորման մաշվածությունը հաշվարկվում է 40% դրույքաչափով նվազող մնացորդի եղանակով, ընդ որում՝ մաշվածության մնացորդային ամբողջ գումարը վերագրելի է 5-րդ տարվան: Մաշվածության գծով առկա է հարկային խնայողության հնարավորություն 20%-ի չափով: Կապիտալի պահանջվող եկամտաբերությունը 13% է:

Աղյուսակ 1

Տվյալները՝ մաշվածության հաշվարկման նվազող մնացորդի մեթոդի կիրառմամբ

Հասույթ		5600	6776	8204	9926	12012	
Փոփոխուն ծախսեր		-4000	-4840	-5860	-7090	-8580	
Հաստատուն ծախսեր		-23	-27	-31	-36	41	
Հարկվող դրամական հոսքեր		1577	1909	2313	2800	3473	
Շահութահարկ			-315	-382	-463	-560	-695
Հարկային խնայողություն (հազ. ԱՄՆ դոլար)			560	336	202	121	182
Սարքավորման ձեռքբերում	-7000						
Զուտ դրամական հոսքեր	-7000	1577	2154	2267	2539	3034	-513

Հաշվարկվել է նախագծի ԶՆԱ-ն՝ հասկանալու համար, թե որքանով է արդյունավետ այն իրականացնելը՝

$d=0,13$

$$ZNA = \frac{-7000}{(1+0,13)^0} + \frac{1577}{(1+0,13)^1} + \frac{2154}{(1+0,13)^2} + \frac{2267}{(1+0,13)^3} + \frac{2539}{(1+0,13)^4} + \frac{3034}{(1+0,13)^5} + \frac{-13}{(1+0,13)^6}$$
$$= \frac{-7000}{(1+0,13)^0} + \frac{1577}{(1+0,13)^1} + \frac{2154}{(1+0,13)^2} + \frac{2267}{(1+0,13)^3} + \frac{2539}{(1+0,13)^4} + \frac{3034}{(1+0,13)^5} + \frac{-13}{(1+0,13)^6} =$$
$$=(-7000)+1396+1686+1571+1557+1647-171=616:$$

Ներկայացվել է նույն օրինակը՝ ընդունելով, որ մաշվածությունը հաշվարկվում է գծային եղանակով, իսկ մաշվածության մնացորդային գումարը 0 է:

Աղյուսակ 2

Տվյալները՝ մաշվածության հաշվարկման գծային մեթոդի կիրառմամբ

Տարի	0	1	2	3	4	5	6
Հասույթ		5600	6776	8204	9926	12012	
Փոփոխուն ծախսեր		-4000	-4840	-5860	-7090	-8580	
Հաստատուն ծախսեր		-23	-27	-31	-36	41	
Հարկվող դրամական հոսքեր		1577	1909	2313	2800	3473	
Շահութահարկ			-315	-382	-463	-560	-695
Հարկային խնայողություն (հազ. ԱՄՆ դոլար)			280	280	280	280	280
Սարքավորման ձեռքբերում	-7000						
Զուտ դրամական հոսքեր	-7000	1577	1874	2211	2617	3193	-415

Հաշվարկվել է նախագծի ԶՆԱ-ն.

$d=0,13$

$$ZNA = \frac{-7000}{(1+0,13)^0} + \frac{1577}{(1+0,13)^1} + \frac{1874}{(1+0,13)^2} + \frac{2211}{(1+0,13)^3} + \frac{2617}{(1+0,13)^4} + \frac{3193}{(1+0,13)^5} + \frac{-415}{(1+0,13)^6}$$
$$= \frac{-7000}{(1+0,13)^0} + \frac{1577}{(1+0,13)^1} + \frac{1874}{(1+0,13)^2} + \frac{2211}{(1+0,13)^3} + \frac{2617}{(1+0,13)^4} + \frac{3193}{(1+0,13)^5} + \frac{-415}{(1+0,13)^6} =$$
$$=(-7000)+1396+1468+1494+1600+1733-234=451:$$

Առաջին դեպքում ծրագրի ԶՆԱ-ն կազմում է 606 հազ ԱՄՆ դոլար, իսկ երկրորդ դեպքում՝ 451 հազ. ԱՄՆ դոլար:

Քանի որ ՁՆԱ-ն դրական է, ծրագիրը երկու դեպքում էլ ֆինանսապես ընդունելի է:

Ֆիշերի բանաձևի միջոցով հաշվենք իրական տոկոսադրույքը առկա գնաճի պայմաններում՝

$$(1+0,13)=(1+r)(1+0,062)$$

$$r=0.06:$$

Այսինքն, 13% անվանական տոկոսադրույքի և 7.5% գնաճի պայմաններում իրական տոկոսադրույքը 6% է, որի դեպքում ընդունելի է դառնում ծրագրի իրականացումը:

Արդյունքում, նախագծի ՁՆԱ-ն երկու դեպքում էլ դրական ցուցանիշ է, սակայն ակնհայտ է, որ նվազող մնացորդի մեթոդով մաշվածության հաշվարկի դեպքում ցուցանիշն ավելի մեծ է, քան գծայինի դեպքում: Այն պայմանավորված է գծային մեթոդի դեպքում զուտ ներկա արժեքի թերազնահատմամբ, որի հետևանքով ավելանում է անիրական ստացված շահույթի համար վերցված հարկային մասը՝ իր հերթին հանգեցնելով ներդրումային ծրագրից անիրատեսական եկամուտների փոխանցմանը կառավարությանը:

Եզրակացություն: Ներդրումային նախագծերը համարվում են երկրի զարգացման կարևոր նախապայմաններից, քանի որ դրանք են ապահովում ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: Որպեսզի ներդրումային նախագծերը լինեն արդյունավետ, դրանք սկսելուց առաջ պետք է հաշվի առնել առկա գնաճի և հարկային համակարգի պայմաններում զուտ դրամական հոսքերի բերած օգուտը:

Օրինակը ցույց է տալիս, որ հարկվող գումարը նվազեցնելով կամ ավելացնելով՝ կարող են ազդել նախագծերի զուտ ներկա արժեքի վրա, իսկ իրական տոկոսադրույքի և անվանական տոկոսադրույքի համադրմամբ կարող ենք հասկանալ նախագծի իրական եկամտաբերությունը: Գնաճի և հարկման բացասական ազդեցությունը հաճախ պայմանավորված է մաշվածության հաշվարկի ընտրված մեթոդով: Գծային մեթոդը կարող է հանգեցնել ներդրումային ծրագրից անիրատեսական եկամուտների փոխանցմանը կառավարությանը: Իսկ նվազող մնացորդի մեթոդը թույլ է տալիս դուրսգրման ավելի արագ տեմպ, որի շնորհիվ հնարավոր է լինում չեզոքացնել գնաճի ազդեցությունը և նվազեցնել հարկվող գումարի չափը:

Առաջարկություն: Քանի որ Հայաստանում, ըստ օրենքի պահանջի, մաշվածությունը հաշվարկվում է միայն գծային եղանակով, ապա ներդրումային նախագծերի արդյունավետությունը բարձրացնելու համար առաջարկում ենք կիրառել նաև նվազող մնացորդի մեթոդը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մանուկյան Գ., Արտադրական կազմակերպությունների ֆինանսներ, Եր., հեղինակային հրատարակություն, 2018:
2. Հարությունյան Թ. Հ., Ներդրումներ և ներդրումային գործունեություն, Եր., ՀԱԱՀ 2021:
3. The Economic Evaluation Of Projects, Edited by David G. Davies, The World Bank Washington, D. C., 1996.
4. Project Evaluation under Inflation Condition, Monier Hindy and Periham El Missiry, Tanta university, GASCO, December 2004.
5. Using the Net Present Value Rule to Make Value-Creating Investment, Xu Hui, School of Business management Tong Hua Normal University, Tong Hua, China, © 2015. The authors – Published by Atlantis Press.
6. https://ceopedia.org/index.php/Investment_project

НВАРД ПОГОСЯН*Бухгалтерский учет, бакалавриат, 2-й курс*

ОЦЕНИВАНИЕ ИНВЕСТИЦИОННЫХ ПРОЕКТОВ В ЗАВИСИМОСТИ ОТ ИНФЛЯЦИИ И НАЛОГООБЛОЖЕНИЯ

Ключевые слова: инвестиционный проект, инфляция, налогообложение, чисто приведённая стоимость, оценивание, прибыль (выгода)

В статье представлена оценка инвестиционных проектов, обеспечивающих нормальное развитие экономики в зависимости от инфляции и налогообложения. В данной статье автор предпринял попытку на основе инвестиционного проекта американской организации оценить роль налоговых сбережений и инфляции в оценке эффективности инвестиций. Автором рассмотрена реальная доходность проекта в текущих условиях инфляции, доля налоговой экономии в случае начисления линейной амортизации и метода уменьшаемого остатка. Приведена чистая текущая стоимость проекта, когда амортизация рассчитывается с использованием линейного метода метода уменьшаемого остатка. По результатам исследования подчеркнули, что более эффективно использовать метод уменьшаемого остатка для начисления амортизации, поскольку тогда увеличивается налоговая экономия и чистая приведенная стоимость проекта.

NYARD POGHOSYAN*Accounting, Bachelor's Degree, 3rd Year*

THE EVALUATION OF INVESTMENT PROJECTS DEPENDING ON THE INFLATION AND TAXATION

Keywords: investment project, inflation, tax, net present value (NPV), valuation, profit.

The article presents the assessment of investment projects that ensure the normal development of the economy depending on inflation and taxation. In this article, an attempt has been made to evaluate the role of tax savings and inflation in evaluating the effectiveness of investments based on the investment project of an American organization. The author considered the real profitability of the project in the current inflation conditions, the share of tax savings in the case of calculating the linear depreciation and decreasing balance methods. To carry out the observations, he calculated the net present value of the project when depreciation is calculated using the straight-line method and when it is calculated using the declining balance method. The results of the research emphasized that it is more effective to use the declining balance method of calculating depreciation, because then the tax savings increase and the net present value of the project increases.